ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում, ստորև ներկայացնում է **ՀՀ Արագածոտնի մարզի Աղձքի միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/6** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **09.09.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/6** գնման պայմանագրում 2026 թվականի փետրվարի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի N **ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/6** պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.16 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

10.09.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/7 գնման պայմանագրի

ք. Երևան «19» 02 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վաղժան» ՍՊԸ-ն (Գործընկեր-1), ի դեմս տնօրեն Վ.Գրիգորյանի և «Մոնոլիտ Գրուպ» ՍՊԸ-ն (Գործընկեր-2), ի դեմս տնօրեն Գ.Խաչատրյանի (այսուհետ երկուսը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 25.07.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշումը, N Ն/27.1/848-2026 զեկուցագիրն այն մասին, որ նշված աշխատանքներն առաջին աստիճանի ռիսկայնության են և **ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակի Տ. Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 10.09.2025թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/7 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.2 Պայմանագրի 4.6 կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011057859
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

---------- Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

Գործընկեր-1
«Վաղժան» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Պռոշյան 1 նրբ.62/2տուն
ՀՎՀՀ 00156229
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
հ/հ 1150015126116102

Տնօրեն՝

---------- Վ.Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Գործընկեր-2
«Մոնոլիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նորքի 9 փ. 121տ
ՀՎՀՀ 00506868
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16600829619500

Տնօրեն՝

---------- Գ.Խաչատրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված
10.09.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/7 գնման պայմանագրի
«19» 02 2026թ. կնքված N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2025թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45461100/4	Հ Արագածոտնի մարզի Ագարակի Տ. Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքներ	41 384 877	-	81 956 600	81 956 600	163 913 200	163 913 200	163 913 200	163 913 200	163 913 200	163 913 200	163 913 200	163 913 200	163 913 200	163 913 200

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011057859
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

---------- Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

Գործընկեր-1
«Վաղժան» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Պռոշյան 1 նրբ.62/2տուն
ՀՎՀՀ 00156229
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 1150015126116102

Տնօրեն՝

---------- Վ.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր-2
«Մոնոլիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նորքի 9 փ. 121տ
ՀՎՀՀ 00506868
«ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16600829619500

Տնօրեն՝

---------- Գ.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

evocaBANK

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

14.10.2025թ. ՏՐՎԱԾ ԹԻՎ 4710/27

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **14.10.2025թ. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ** (այսուհետ՝ **«Բանկ»**) կողմից **«ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին և «ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ-ին** (այսուհետ՝ **«Պրինցիպալ»**) տրամադրվել է **4710/27** Բանկային երաշխիքը:
2. Երաշխիքի կողմերի՝ Բենեֆիցիարի **(«ՀՀ քաղաքաշինության կոմիտե»)** և Պրինցիպալի (**«ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ**) փոխադարձ համաձայնությամբ թիվ **4710/27** երաշխիքի 5-րդ կետը փոփոխվում է և շարադրվում հետևյալ բովանդակությամբ.

«5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀԲԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/7 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը, սակայն ոչ ավել քան **30.06.2028** թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:»

3. Երաշխիքի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
4. Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն ունեն միևնույն իմաստը, ինչ Երաշխիքում օգտագործվողներ հասկացությունները:
5. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Երաշխիքի անբաժանելի մասը:
6. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կորպորատիվ վարկավորման Վարչության ղեկավար՝ **Կ. Վարդանյան**

ՀՀ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ
ARMENIA "EVOCABANK" OJSC

Գլխավոր հաշվապահ՝ **Է. Ջանինյան**

«Էվոկաբանկ» ԲԲԸ
"Evocabank" OJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evoca.am
www.evoca.am

№ 433 / 27 166 01 012437

Date 18/02/ 2026